

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԲ-ԲՄԱՇՁԲ-22/5**

ք. Արմավիր

«31» հոկտեմբերի 2022թ.

«Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է «Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, գազաֆիկացման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները»** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզի» ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **240 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզի» ստանդարտներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը Տիջոցով փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

- 1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:
- 2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:
- 3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
 - ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
 - բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:
- 5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **210000000 (երկու հարյուր տաս միլիոն) ՀՀ դրամ,** որից **35000000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900335003944
ՀՎՀՀ՝ 04440427
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուղաթյան

(ստորագրություն)

Կ.Տ



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Ք. Երևան, Քաջազունի 1
Բանկը՝ Հայբիզնես բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1150014351360100
ՀՎՀՀ՝ 04421922
Տնօրեն՝ Հ. Եղիազարյան

Հ. Եղիազարյան

(ստորագրություն)

Կ.Տ



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ԳԱԶԱՖԻԿԱՅՄԱՆ ԵՎ ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Միավոր	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ
1	3	4	5	6	7
Քանդման աշխատանքներ					
1	Կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ ²	216.7	1.00	216.70
2	Մանրահատակի քանդում	մ ²	356.4	0.65	231.66
3	Լամինատե հատակի քանդում	մ ²	65.5	0.40	26.20
4	Բետոնե հատակների քանդում	մ ²	95.9	1.40	134.26
5	Հատակների ցեմենտալազե հարթաշերտի քանդում	մ ²	964.1	0.90	867.69
6	Փայտե շրիշակների քանդում	զմ	234.90	0.20	46.98
7	10սմ հաստության միջնորմների քանդում	մ ²	265.00	0.80	212.00
8	Գաջե սվաղի քանդում պատերից, ներկի շերտի հետ միասին	մ ²	2184.30	1.00	2184.30
9	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ ²	114.6	0.30	34.38
10	Հախճասալի քանդում պատերից	մ ²	287.70	1.00	287.70
11	Ց/ավազային սվաղի քանդում պատերից	մ ²	287.70	1.00	287.70
12	Պատուհանների և դռների շեպերի սվաղի քանդում	մ ²	180.00	0.90	162.00
13	Գաջե սվաղի քանդում առաստաղներից, սոսնձաներկի հետ միասին	մ ²	953.80	1.00	953.80
14	Մետաղական դռների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	մ ²	2.80	3.00	8.40
15	Փայտյա դռների ապամոնտաժում	մ ²	81.43	1.00	81.43
16	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	մ ²	13.23	2.00	26.46
17	Մետաղապլաստե պատուհանների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	մ ²	32.13	2.00	64.26
18	Փայտյա պատուհանների ապամոնտաժում /պատուհանագոգերով/	մ ²	144.42	1.00	144.42
19	Ապակեբլոկից վիտրաժների ապամոնտաժում	մ ²	113.00	2.00	226.00
20	Բացվածքի քանդում պատերում	մ ³	7.68	18.00	138.240
21	Աստիճանների մետաղական բազրիքների ապամոնտաժում	զմ	32.0	2.70	86.40
22	Առկա գույքի ժամանակավոր տեղափոխման աշխատանքներ	մ ²	50.00	5.10	255.00

	Հին աղբի և պահեստավորվող իրերի հավաքում, դուրս բերում և կուտակում	տ	142.8	4.00	571.20
	Հին աղբի բարձում և տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տ	140.2	4.50	630.90
	Ընդամենը տվյալ բաժնով				7878.08
	Կշիռ (%)				4.50%
	Ուժեղացման աշխատանքներ				
	Պատերի ուժեղացում				
1	IV կարգի գրունտի քանդում ձեռքով	մ ³	220.0	3.00	660.00
2	Հիմքերի ջրամեկուսացում բիտումի երկտակ քսուկով	մ ²	242.0	2.00	484.00
3	Անցքերի շաղափում պատերում խարիսխների տեղադրման համար 12մմ, L=50սմ	հատ	1300	0.20	260.00
4	Անցքերի շաղափում պատերում խարիսխների տեղադրման համար 12մմ, L=20սմ	հատ	440	0.20	88.00
5	Պատերի քարե շարվածքի կարանների մաքրում 15մմ խորությամբ 4380զմ	մ ²	3.30	50.00	165.00
6	Պատերի մակերևույթի փոշեզերծում	մ ²	1450.0	0.10	145.00
7	Պատերի լվացում	մ ²	1450.0	0.20	290.00
8	Անցքերի շաղափում խարիսխների տեղադրման համար 12մմ, L=22սմ	հատ	320	0.16	51.20
9	Պատերի ուժեղացում տորկրետացումով, 60մմ հաստ.	մ ²	1450.0	9.50	13775.00
10	Ամրանների տեղադրում	տ	6.82	42.50	289.85
11	Ամրան Φ10A500c	տ	3.55	750.00	2662.50
12	Ամրան Φ12A500c	տ	0.51	750.00	382.50
13	Ցանց Φ4Bp-I, 100x100մմ	մ ²	1380.0	1.80	2484.00
14	Պոլիմերցեմենտային շաղախի ներարկում շաղափած անցքերում	կգ	68.0	0.50	34.00
15	Գրունտի ետլիցք տոփանումով	մ ³	203.0	0.80	162.40
16	Հին աղբի և ավելորդ գրունտի հավաքում, բարձում եւ տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տ	46.7	3.60	168.12
	Ընդամենը տվյալ բաժնով				22101.57
	Կշիռ (%)				12.63%
	Ծածկերի ուժեղացում				
1	Անցքերի շաղափում խարիսխների տեղադրման համար 14մմ, L=50սմ	հատ	540	0.50	270.00
2	Անցքերի շաղափում խարիսխների տեղադրման համար 14մմ, L=30սմ	հատ	36	1.20	43.20
3	Խողզների և անցքերի բացում բազմանցք սալերում	մ ³	12.97	20.00	259.40
4	Մակերևույթի փոշեզերծում	մ ²	990.0	0.10	99.00
5	Բազմանցք սալերի կարանների մաքրում	մ ³	23.1	20.00	462.00
6	Հին աղբի և ավելորդ գրունտի հավաքում, բարձում եւ տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տ	69.7	4.00	278.80

Խարամի շերտի ճամնակվոր դուրս բերում հետագա շտամնակմամբ	մ ³	99.0	8.00	792.00	
Շտամի ջերմանելուսիչ խարամի շերտի լրացում	մ ³	8.0	13.00	104.00	
Բետոնի լիցք հավաքովի ե/բ սալերի բացված անցքերի և խողջների մեջ /B20 դասի թեթև/	մ ³	16.2	100.00	1620.00	
Բազմանցք սալերի կարաններում ց/ա շաղախի ներարկում M150	մ ³	23.1	100.00	2310.00	
Պոլիմերցեմենտային շաղախի ներարկում շաղափած անցքերում	կգ	26.0	2.00	52.00	
Ծածկի սալերի ուժեղացում B20 դասի թեթև բետոնի շերտով	մ ³	39.6	84.00	3326.40	
Ամրան Փ6AcI	տ	0.125	750.00	93.75	
Ամրան Փ8AcI	տ	0.319	750.00	239.25	
Ամրան Փ10A500c	տ	0.91	750.00	682.50	
Ամրան Փ12A500c	տ	0.5	750.00	375.00	
Ցանց Փ4Bp-I, 100x100մմ	մ ²	990.0	1.50	1485.00	
Ընդամենը տվյալ բաժնով				12492.30	
Կշիռ (%)				7.14%	
Հատակների ուժեղացման աշխատանքներ					
1	Հորիզոնական անցքերի գայլիկոնում պատերում	հատ	440	0.60	264.00
2	Պոլիմերցեմենտային շաղախի ներարկում շաղափած անցքերում	կգ	84.0	1.78	149.52
3	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 15սմ հաստությամբ, 5-10մմ ֆրակցիայի	մ ³	74.25	9.00	668.25
4	Հատակների իրականացում B15 դասի բետոնով 10սմ հաստությամբ	մ ³	49.5	63.00	3118.50
5	Ամրանավորում ցանցով Փ4Bp-I, 100x100մմ	տ	0.99	60.00	59.40
6	Ցանց Փ4Bp-I, 100x100մմ	մ ²	495.0	1.40	693.00
Ընդամենը տվյալ բաժնով				4952.67	
Կշիռ (%)				2.83%	
Կառուցման աշխատանքներ					
1	Ե/բ հեծանների պատրաստում միջնորմների տակ B15 դասի բետոնից	մ ³	2.70	60.00	162.00
2	Ամրան Ø10A500C	տ	0.29	700.00	203.00
3	Ամրան Փ8AcI	տ	0.19	700.00	133.00
4	Միջնորմների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 10սմ հաստությամբ	մ ²	330.00	4.60	1518.00
5	Միջնորմների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 20սմ հաստությամբ	մ ³	3.60	35.00	126.00
6	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ ³	3.89	30.00	116.70
7	Շարվածքի ամրանավորում	տ	1.11	25.00	27.75
8	Ամրան Ø10A500C	տ	0.61	700.00	427.00
9	Ամրան Փ6AcI	տ	0.498	700.00	348.60

Բլոկերի եւ կոնստրուկցիաների միջեւ, կարաններում տեղադրում 100x20մմ չափերի	զմ	620.0	0.20	124.00
Բարձր միաձուլ բարավորների պատրաստում B12.5 դասի բետոնից	մ ³	1.32	70.00	92.40
Ամրան Ø10A500c	տ	0.22	700.00	154.00
Ընդամենը տվյալ բաժնով				3432.45
Կշիռ (%)				1.96%
Վիտրամենների բազվածքների շարում				
1 Պատի կառուցում թեթևաբետոնե բլոկներից 30սմ /20+10սմ/ հաստությամբ	մ ³	33.60	31.00	1041.60
2 Միջնորմների շարվածքի ամրանավորում	տ	2.400	75.00	180.00
3 Ամրան Ø 10A500C	տ	1.14	700.00	798.00
4 Ամրան Ø 6A1 /ցանց/	տ	1.26	700.00	882.00
5 Բլոկերի դատարկությունների լցում B7.5 դասի թեթև բետոնով	մ ³	3.8	45.00	171.00
6 Անցքերի շաղափում պատերում Ø 16մմ, L=100մմ	հատ	96	0.20	19.20
7 Անցքերի ներարկում պոլիմերցեմենտային շաղախով	մ ³	0.32	180.00	57.60
Ընդամենը տվյալ բաժնով				3149.40
Կշիռ (%)				1.80%
Բազվածքների շարում				
1 Պատի կառուցում թեթևաբետոնե բլոկներից 20+10սմ հաստությամբ	մ ³	31.10	31.00	964.10
2 Միջնորմների շարվածքի ամրանավորում	տ	2.680	75.00	201.00
3 Ամրան Ø 10A500C	տ	1.220	700.00	854.00
4 Ամրան Ø 6A1 /ցանց/	տ	1.460	700.00	1022.00
5 Բլոկերի դատարկությունների լցում B7.5 դասի թեթև բետոնով	մ ³	1.96	45.00	88.20
6 Անցքերի շաղափում պատերում Ø 16մմ, L=100մմ	հատ	290	0.25	72.50
7 Անցքերի ներարկում պոլիմերցեմենտային շաղախով	մ ³	0.74	180.00	133.20
Ընդամենը տվյալ բաժնով				3335.00
Կշիռ (%)				1.92%
Հատակներ				
1 Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ ²	965.0	2.20	2123.00
2 Լամինատե հատակի պատրաստում 12մմ /ներառյալ սպունգը/	մ ²	17.9	13.00	232.70
3 Վինիլային հատակների իրականացում 2մմ հաստ. ենթաշերտերի հետ միասին	մ ²	425.3	14.00	5954.20
4 Պրեսգրանիտե հատակների պատրաստում /ոչ պակաս, քան 10մմ հաստությամբ/	մ ²	397.6	11.00	4373.60
5 Աստիճանների երեսպատում պրեսգրանիտե սալերով /չսահող/	մ ²	32.0	17.00	544.00
6 Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոլանով /խեցեսալե հատակների տակ/	մ ²	124.2	2.40	298.08
7 Խեցեսալե հատակի իրականացում	մ ²	124.2	10.00	1242.00
8 Պրեսգրանիտե շրիշակների պատրաստում, h=10սմ	զմ	426.9	1.50	640.35
9 Պրեսգրանիտե աստիճանների պաշտպանիչ ալյումինե անկյունակներ	զմ	74.0	2.35	173.90
10 Լամինացված շրիշակների իրականացում h=8սմ	զմ	265.0	1.50	397.50

				15979.33	
				9.13%	
Նախնական աշխատանքներ					
1	Նախատարի գաջե սվաղում բարձրորակ	մ ²	964.95	3.20	3087.84
2	Նախատարների ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ, լավորակ	մ ²	887.25	2.20	1951.95
3	Կախտվի առաստաղների իրականացում պլաստմասե վահանակներով /հիմնակմախքի իրականացմամբ/	մ ²	77.7	8.00	621.60
4	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի	մ ²	2073.76	2.50	5184.40
5	Պատերի քսահարթում գիպտոնիտով	մ ²	2073.76	1.00	2073.76
6	Պատերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ, լավորակ	մ ²	2073.76	2.00	4147.52
7	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ ²	528.48	2.50	1321.20
8	Պատերի երեսապատում հախճասալով	մ ²	528.48	9.00	4756.32
9	Սանհանգույցների մետաղապլաստե խուլ բաժանարար միջնորմների տեղադրում, չբացվող h=1.8մ /ներառյալ սարքերը, միացումները/	մ ²	21.00	35.00	735.00
10	Կանգնակների երեսապատում 12.5մմ հաստ. ջրակայուն գիպսաստվարաթղթով, /հիմնակմախքի իրականացմամբ/	մ ²	11.0	9.00	99.00
11	Աստիճանների այլումինե բազրիքների տեղադրում, ուղղահայաց ձողերով, բարձրորակ	գմ	32.0	29.00	928.00
12	Պողպատե խողովակներից ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	մ ² հորիզ. պրոյ.	90.0	2.30	207.00
	Ընդամենը տվյալ բաժնով				25113.59
	Կշիռ (%)				14.35%
Բացվածքներ					
1	Մետաղապլաստե, սպիտակ, 60 մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, հայկական պրոֆիլով պատուհանների, տեղադրում, խցիկները ոչ պակաս 4-ից, մետաղ. ներդիրը 1.2մմ, ապակիների հեռ.-ը 12մմ կամ 18մմ /ներառյալ ա/փաթեթը/ բացվող	մ ²	71.11	37.00	2631.07
2	Մետաղապլաստե, սպիտակ, 60 մմ հաստ., 4+4մմ ապակեփաթեթով, հայկական պրոֆիլով պատուհանների, տեղադրում, խցիկները ոչ պակաս 4-ից, մետաղ. ներդիրը 1.2մմ, ապակիների հեռ.-ը 12մմ կամ 18մմ /ներառյալ ա/փաթեթը/ չբացվող	մ ²	89.21	30.00	2676.30
3	Մետաղապլաստե սպիտակ դռների տեղադրում, խցիկները ոչ պակաս 4-ից, մետաղ. ներդիրը 1.2մմ, ապակիների հեռ.-ը 12մմ կամ 18մմ /հայկական, ներառյալ սարքերը, կողպեքները/	մ ²	85.38	45.00	3842.10
4	Արտաքին այլումինե երկշերտ ապակեպատ, 4+4մմ, արտերկրյա պրոֆիլով, ջերմականըջակով դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը/	մ ²	17.56	90.00	1580.40
5	Բարդ փականի եւ սովորականի գնային տարբերությունը	հատ	33	8.00	264.00
6	Միջատապաշտպան ցանց	մ ²	72.0	5.00	360.00
7	Դռների և պատուհանների շեփերի գաջե սվաղում	մ ²	190.0	4.50	855.00
8	Շեփերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ, լավորակ	մ ²	190.0	1.50	285.00
9	Շեփերի հարդարող անկյունակների տեղադրում	գմ	380.0	0.30	114.00
10	Արտաքին պատերի շեփերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, բարելավված որակի	մ ²	44.00	4.00	176.00
11	Արտաքին պատուհանագոգերի իրականացում ցինկապատ քիթեղից δ=0.55մմ	մ ²	57.00	10.00	570.00

	Ստանդարտ հանագոգերի տեղադրում 30սմ լայնությամբ,	մ ²	68.40	1.50	102.60
	Ստանդարտ հանագոգերի արժեքը, 30սմ լայնությամբ,	գմ	228.00	3.50	798.00
	Ընդամենը տվյալ բաժնով				14254.47
	Կշիռ (%)				8.14%
	Քաղվածքների ուժեղացում				
1	Մետաղական շրջանակներով պատերի մեջ բացվածքների ուժեղացում	տ	1.620	70.00	113.40
2	Ամրան Փ12A500c	տ	0.032	700.00	22.40
3	Անցքերի շաղափում պատերում 30մմ, L=30սմ	100 հատ	0.68	200.00	136.00
4	Անկյունակ L100x10	տ	1.310	910.00	1192.10
5	Անկյունակ L140x12	տ	0.11	910.00	100.10
6	Շերտապողպատ —4x50, L=650	տ	0.17	910.00	154.70
7	Պոլիմերցեմենտահիմ լուծույթի ներարկում շաղափած անցքերում	կգ	26.20	3.00	78.60
8	Էլեկտրոդներ	կգ	24.0	1.00	24.00
9	մետաղական շրջանակների տարրերի պաշտպանիչ սվաղի իրականացում ցեմենտ-ավազե շաղախով 30մմ հաստությամբ, ցանցի վրա, ներառյալ ցանցը եւ կմախքի պատրաստումը	մ ²	20.7	5.00	103.50
10	Չգահեղյուսներ M16x1.5, L=580, 12 հատ	հատ	28	1.50	42.00
	Ընդամենը տվյալ բաժնով				1966.80
	Կշիռ (%)				1.12%
	Հատավոր աստիճանների ամրացում				
1	Անցքերի շաղափում հատավոր աստիճաններում Ø12մմ, L=50մմ	հատ	58	0.25	14.50
2	Ամրան Ø 10A500C, L=200մմ	տ	0.011	700.00	7.70
3	Փրփրապլաստ 50մմ հաստությամբ	մ ³	1.5	20.00	30.00
4	Սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի, մետաղացանցի վրա	մ ²	15.0	2.70	40.50
5	Սվաղի վեցանկյուն ցանց /d=0.7մմ/	մ ³	15.0	0.80	12.00
	Ընդամենը տվյալ բաժնով				104.70
	Կշիռ (%)				0.06%
	Տանիք				
1	Տանիքի ջրահեռացման խողովակների ապամոնտաժում, ձևավոր տարրերի հետ միասին	գմ	60.00	0.40	24.00
